ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԿԳՄՆ «ԳԱՎԱՌԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ 2026թ-ի հունվարի 15-ի թիվ 28 ԵՐԻՍՏՈՒՄ

ՔՈԼԵՋԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Կ. ԿՈՒՌՈՅԱՆ

«15» «01» 2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳԱՎԱՌԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

ՀՆԳԱՄՅԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

(2026-2030 թթ.)

Գավառ 2026թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Քոլեջի առաքելություն 3

Քոլեջի տեսլական 4

Քոլեջի գործունեության հիմնական սկզբունքները 4

Հիմնարար արժեքները 5

Քոլեջի զարգացման ռազմավարական ուղղություններն ըստ գործունեության գերակա ոլորտների.....6

1. Կրթական ծրագրերի որակի բարձրացում և արդիականացում.....6

2.Դասախոսական կազմի մասնագիտական զարգացում.....7

3. Ուսանողակենտրոն միջավայրի ապահովում.....8

4. Ենթակառուցվածքներ և ռեսուրսներ.....9

5. Հանրային պատասխանատնություն, արտաքին կապեր և միջազգայնացում.....10

6. Կառավարման արդյունավետության բարձրացում 10

7. Որակի ներքին ապահովման համակարգի կատարելագործում.....11

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը լինելով երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման և վերարտադրության նախապայմաններից, դիտվում է որպես երկրի զարգացման առաջնային գերակայություններից մեկը: Առկա մարտահրավերներին համարժեք արձագանքելու և համապատասխան գործողություններ իրականացնելու հիմնական հնարավորություններից է գյուղատնտեսության ոլորտի համար մրցունակ կադրերի պատրաստումը: Կադրեր, որոնք կկարողանան ցուցաբերել նորարարական, ստեղծագործական մոտեցումներ առկա հիմնախնդիրների լուծման համար և կանխատեսել գյուղատնտեսության ոլորտի ապագա մարտահրավերները:

Ծրագիրն ուղղված է Քոլեջի կրթական գործունեության որակի բարձրացմանը, կառավարման արդյունավետության ամրապնդմանը, Քոլեջ-աշխատաշուկա կապերի խորացմանը:

ՀՀ ԿԳՄՍՆ «Գավառի ակադեմիկոս Ա.Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ը /այսուհետ՝ Քոլեջ/ 2026-2030 թվականների զարգացման ռազմավարական ծրագիրը նախատեսում է Քոլեջի գործունեության հիմնական ուղղությունները, նպատակները, խնդիրները և կառուցակարգերը:

2026-2030 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել ՀՀ միջին մասնագիտական և արհեստագործական կրթական ոլորտները կարգավորող օրենսդրությունը, Քոլեջի Կանոնադրությունը, նախորդ Ռազմավարական ծրագրի կատարման ցուցանիշները, ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցը:

ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Քոլեջի առաքելությունն է հանդիսանալ գյուղատնտեսության և այլ ոլորտների զարգացման առաջատար կրթական հաստատություն, իրականացնել աշխատաշուկայի պահանջներին

համապատասխան կրթական ծրագրեր, պատրաստել մասնագետներ, ովքեր իրենց գիտելիքներով, կարողություններով և պրակտիկ հմտություններով համարժեք կարձագանքեն ժամանակակից մարտահրավերներին և գործատուների պահանջներին, կլինեն մրցունակ, նախաձեռնող և պատրաստ՝ շարունակական մասնագիտական զարգացման:

ՔՈԼԵՋԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Դառնալ տարածաշրջանում ճանաչված և նախընտրելի գյուղատնտեսական-տեխնոլոգիական կրթական հաստատություն, որը.

- ✓ Ապահովելու է որակի բարձր մշակույթի և նորարական մոտեցումների արմատավորում, իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում շահագրգիռ կողմերին որակյալ կրթության մատուցում,
- ✓ Ապահովելու է գործատուների պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստում,
- ✓ Ձգտելու է զարգացնել իր գերակա ուղղությունները և մրցակցային առավելությունները
- ✓ Իրականացնելու է հետազոտություններ և ներդնելու է նորարարական լուծումներ՝ արհեստական բանականության և կանաչ տեխնոլոգիաների ոլորտներում,
- ✓ Ստեղծելու է արդյունավետ ուսանողակենտրոն և ներառական ուսումնական միջավայր,
- ✓ Նպաստելու է տարածաշրջանի տնտեսական և սոցիալական զարգացմանը,
- ✓ Համագործակցելու է տեղական, ինչպես նաև միջազգային գործընկերների հետ և մասնակցելու է փորձի փոխանակման ծրագրերին,
- ✓ Առաջարկելու է լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրեր՝ տարածաշրջանի տարբեր շերտերի կրթական կարիքներին համապատասխան:

ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ԵՆ

1) Օրինականություն,

2) Ինքնավարություն և ազատություն,
3) Կառավարման թափանցիկություն և կոլեգիալություն,
4) Կրթության որակի, մատչելիության և ներառականության ապահովում,
5) Ակադեմիական ազնվություն:

ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

1. ՀԱՍԱՆԵԼԻ ԵՎ ՄԱՏՉԵԼԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- ✓ Կարևորում է յուրաքանչյուր սովորողի մատչելի, հասանելի և որակյալ մասնագիտական կրթություն ստանալու իրավունքը,
- ✓ Ապահովում է սովորողներին բարձրորակ կրթություն և կրթական ձեռքբերումներ:

2. ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

- ✓ Ներդնում է արդի մեթոդներ, տեխնոլոգիաներ և մոտեցումներ,
- ✓ Խրախուսում է հետազոտական, ստեղծագործական մտածողությունը և նոր գաղափարների փորձարկումը:

3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

- ✓ Հաշվետու է շահակիցների առջև իր գործողությունների համար,
- ✓ Ապահովում է թափանցիկություն՝ որոշումների կայացման գործընթացներում:

4. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

- ✓ Կարևորում է յուրաքանչյուր սովորողի և աշխատակցի ակադեմիական ազատությունը և ազնվությունը:

5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- ✓ Նպաստում է համայնքի բարեկեցության բարձրացմանը և տնտեսական զարգացմանը,
- ✓ Իրականացնում է սոցիալական նշանակության ծրագրեր և նախաձեռնություններ,
- ✓ Կարևորում է սոցիալական գործընկերությունը՝ որպես հավասարության ապահովման, խնդիրների լուծման, միջանձնային փոխհարաբերությունների կարգավորման, արդյունավետ եղանակների որոշման հիմնական միջոց:

6. ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- ✓ Ապահովում է հավասար հնարավորություններ բոլոր ուսանողների համար՝ բացառելով խտրականությունը,
- ✓ Կարևորում և զարգացնում է սովորողների ու աշխատակիցների նախաձեռնողականությունը և մասնակցությունը Քոլեջին վերաբերող կարևորագույն հարցերի քննարկման ու որոշումների ընդունման գործընթացում:

ՔՈԼԵՋԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ

1. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Նպատակ՝ ՄԿԾ-ների արդյունավետ իրականացում, կրթական գործընթացի որակի ապահովում և շարունակական բարձրացում, աշխատաշուկայի պահանջներին և ՊԿՀ-ներին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստում:

Խնդիր 1.1. Վերջնարդյունքահեն ՄԿԾ-ների շարունակական վերանայում, արդիականացում և արդյունավետ իրականացում

Գործողություններ՝

- Աշխատաշուկայում մասնագիտությունների պահանջարկի ուսումնասիրություն, կրթական ծրագրերի մշակում և իրականացում,
- ՄԿԾ-ների բովանդակության արդիականացում՝ ըստ ոլորտային ստանդարտների,
- ՄԿԾ-ների վերջնարդյունքների ապահովում:

Խնդիր 1.2. Ակտիվ և ինտերակտիվ դասավանդման մեթոդների ներդրում

Գործողություններ՝

- Դասախոսների շարունակական վերապատրաստում,
- Արդի դասավանդման մեթոդների և նորարարական տեխնոլոգիաների կիրառում, ուսումնական ռեսուրսների բազմազանեցում և արդիականացում,
- Հետազոտական բաղադրիչի ներառում ՄԿԾ-ների ծրագրերում,

- Էլեկտրոնային ուսումնառության նյութերի մշակում:

Խնդիր 1.3. Պրակտիկաների կատարելագործում, ԱՀՈՒ մոդելի ներդրում

Գործողություններ՝

- Գործընկեր կազմակերպությունների ցանցի ընդլայնում,
- Գործատուների ներգրավում պրակտիկաների, ԱՀՈՒ-ների ծրագրերի մշակման գործընթացներում, պրակտիկաների կազմակերպման արդյունավետության ապահովում:

Խնդիր 1.4. Գնահատման համակարգի կատարելագործում

Գործողություններ՝

- Ռուբրիկների և գնահատման չափանիշների մշակում:

2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Նպատակ՝ Դասախոսների շարունակական մասնագիտական զարգացման ապահովում, մենթորության համակարգի ներդրում և գործատու-դասախոսի ներգրավում

Խնդիր 2.1.Դասախոսների վերապատրաստումների կազմակերպում և հետազոտական կարողությունների զարգացում

Գործողություններ՝

- Դասախոսների կարիքների գնահատում, մասնագիտական և մեթոդական զարգացման շարունակական ապահովում,
- Անհրաժեշտության դեպքում առցանց դասընթացների հասանելիության ապահովում,
- Դասախոսների հետազոտական աշխատանքների իրականացում,
- Դասախոսների օտար լեզվի /անգլերենի/ մակարդակի բարձրացում:

Խնդիր 2.2. Մենթորության համակարգի ներդրում

Գործողություններ՝

- Մենթորության համակարգի ներդրման ապահովում, փորձառու մասնագետների և սկսնակ դասախոսների արդյունավետ համագործակցություն,
- Կադրերի ռեզերվի ստեղծում:

Խնդիր 2.3. Գործատու-դասախոսների ներգրավում

Գործողություններ՝

- Գործատու-դասախոսների հավաքագրման խթանում,
- Ոլորտի առաջատար մասնագետների հետ համագործակցության հաստատում:

3. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Նպատակ՝ ուսանողների զարգացմանը նպաստող, աջակցող և ներառական ուսումնական միջավայրի ստեղծում

Խնդիր 3.1. Ուսանողական ինքնակառավարման զարգացում և ներառականության ապահովում

Գործողություններ՝

- Ուսանողների ներգրավում քոլեջի կառավարման գործընթացներում,
- Ուսանողական նախաձեռնությունների խթանում,
- Ներառական կրթության ապահովում, հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար համապատասխան պայմանների և միջավայրի ստեղծում:

Խնդիր 3.2. Արտալսարանային միջոցառումների համակարգի կատարելագործում

Գործողություններ՝

- Տարեկան միջոցառումների ժամանակացույցի մշակում,

- Ուսանողների սոցիալ-մշակութային զարգացմանը նպատակաուղղված աշխատանքերի արդյունավետության բարձրացում:

Խնդիր 3.3. Շրջանավարտների զբաղվածության և կարիերայի առաջխաղացման խթանում:

Գործողություններ՝

- Շրջանավարտների տվյալների էլեկտրոնային բազայի ստեղծում,
- Շրջանավարտների զբաղվածության մոնիտորինգի իրականացում, գործատու-շրջանավարտ հետադարձ կապի ամրապնդում:

Խնդիր 3.4. Քոլեջի դիմորդների կայուն հոսքի ապահովում:

Գործողություններ՝

- Հանրության հետ Քոլեջի համագործակցության ակտիվացում, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպում,
- Համագործակցության ապահովում՝ դպրոցների մասնագիտական կողմնորոշման պաասխանատուների, գործատուների հետ,
- Քոլեջի կրթական ծառայությունների գովազդում համացանցի միջոցով, հանրությանը հավաստի և ամբողջական տեղեկատվության տրամադրում՝ քոլեջի ընդունելության կարգի վերաբերյալ:

4. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Նպատակ՝ Քոլեջի ենթակառուցվածքների զարգացում, կրթական, հետազոտական նյութատեխնիկական և այլ ռեսուրսների շարունակական արդիականացում

Խնդիր 4.1. Նյութատեխնիկական ռեսուրսների համալրում և արդիականացում, ներառական կրթության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում

Գործողություններ՝

- Քոլեջի բնականոն գործունեության, ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովում, տեխնիկական վերազինում,
- Մասնագիտական գրականության համալրում, անդամակցում էլեկտրոնային գրադարաններին։

Խնդիր 4.2. Քոլեջի ռազմավարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ապահովում

Գործողություններ՝

- Ֆինանսական ակտիվների արդյունավետ կառավարում,
- Այլընտրանքային ֆինանսական հոսքերի ավելացում։

5. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Նպատակ՝ Քոլեջի հանրային պատասխանատվության բարձրացում, արտաքին կապերի ակտիվացում

Խնդիր 5.1. Հանրային պատասխանատվության ապահովում և միջազգային գործընկերությունների ցանցի ստեղծում

Գործողություններ՝

- Քոլեջի գործունեության բոլոր ուղղություններով կատարված աշխատանքերի վերաբերյալ հանրությանը օբյեկտիվ տեղեկատվության տրամադրում,
- Համագործակցային կապերի հաստատում տեղական և միջազգային կազմակերպությունների հետ։

6. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Նպատակ՝ Կառավարման համակարգի բարելավում, Քոլեջի անխափան գործունեության ապահովում:

Խնդիր 6.1. Կառավարման իրավական հիմքերի կատարելագործում՝ ՀՀ օրենսդրական կարգավորումներին համապատասխան

Գործողություններ՝

- Օրենսդրական կարգավորումների ներդրում՝ կառավարման գործընթացում,
- Քոլեջի վարչարարության արդյունավետության բարձրացում:

Խնդիր 6.2. Ստորաբաժանումների միջև լիազորությունների և պարտականությունների արդյունավետ գործառության ապահովում:

Գործողություններ՝

- *Բարելավել ստորաբաժանումների միջև գործառնական կապերը, հստակեցնել պատասխանատվության և գործառութային շրջանակը,*
- Կառավարչական բոլոր գործընթացների իրականացման համար ՊԻԳԲ շրջափուլի կիրառման ապահովում,
- Կառավարման և դասավանդման փորձի փոխանակման իրականացում /բենչմարքինգ/:

7. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Նպատակ Որակի ներքին ապահովման համակարգի շարունակականության ապահովում
Խնդիր 7.1 Որակի ներքին ապահովման համակարգի կատարելագործում

Գործողություններ՝

- Մատուցվող ծառայություններից շահակիցների բավարարվածության մակարդակի գնահատում,

- Քոլեջի գործունեության ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, ներքին գնահատման իրականացում,
- Ներքին իրավական ակտերի հրապարակայնության և թափանցիկության ապահովում՝ ներքին և արտաքին շահակիցների համար։